**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ**

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

16 ՓԵՏՐՎԱՐԻ 2018թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին` Վախթանգ Բաբայանը, Հարություն Համազասպյանը, Մխիթար Հայրապետյանը, Ձուրիկ Մարտիրոսյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին`**

**Նիստը վարում էր  համայնքի ղեկավար` Վազգեն Ադամյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար` Արտակ Ստեփանյանը**

Լսեցին
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 34-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է`

Ստեղծել նախաձեռնող խումբ սոցիալական ներդրումների և տարածքային զարգացման ծրագրին մասնակցելու համար:
1.Վազգեն Ադամյան-նախագահ
2.Ռեբերտ Օհանյան-տեղակալ
3.Սերյոժա Ավալյան-քարտուղար
4.Ռոբերտ Ղուկասյան-հետադարձ կապի բողոքների արձագանքման համակարգող
5.Կարեն Բալյան-խմբի անդամ
6.Մխիթար Կարապետյան-խմբի անդամ
7.Թաթուլ Դումանյան-խմբի անդամ
8.Սիրաք Ռաֆայելյան-խմբի անդամ
9.Արտակ Ստեփանյան-խմբի անդամ
10.Նորայր Մելքումյան-խմբի անդամ
11.Սարգիս Այունց-խմբի անդամ
12.Հովհաննես Նազլուխանյան-խմբի անդամ
13.Նիկոլայ Խալաթյան-խմբի անդամ
14.Ալեքսանդր Քեշիշյան-խմբի անդամ
15.Կառլեն Մարտիրոսյան-խմբի անդամ
16.Ձուրիկ Մարտիրոսյան-խմբի անդամ
17.Միշա Ղուկասյան-խմբի անդամ
18.Դավիթ Դալլաքյան-խմբի անդամ

19.Մակիչ Խոնդկարյան-խմբի անդամ

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 13/

Լսեցին
**2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՌՈԲԵՐՏ ՕՀԱՆՅԱՆ/**

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ մասով և նույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել 2018 թվականի համայնքի զարգացման տարեկան աշխատանքային պլանը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 12/

Լսեցին
**ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 16.02.2018Թ. ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝

Հաստատել համայնքի ավագանու 16.02.18թ. թիվ 2 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը:

1.ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ
/ԶԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ /
2. «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
/ԶԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ /

3.ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ.

1)ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՏՆՏԵՍՎԱՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐԻ ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԿՐՃԱՏՈՒՄ, ԻՍԿ ՀԱՇՎԱՊԱՀԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼ 0.5 ԴՐՈՒՅՔ
2)ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՈՒՄ ԳՈՐԾԱՎԱՐ ԼԱԲԱՐԱՆՏԻ ՀԱՍՏԻՔԻ ԿՐՃԱՏՈՒՄ
3)ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՀԱՇՎԱՊԱՀԻ ԴՐՈՒՅՔԸ ՍԱՀՄԱՆԵԼ 0.5 ԴՐՈՒՅՔ
4)ՀԱՍՏԱՏԵԼ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ

/ՋԵԿ. Վ.

ԱԴԱՄՅԱՆ/

4.ՀԱՍՏԱՏԵԼ 2018Թ.-Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ

/ՋԵԿ. Վ.

ԱԴԱՄՅԱՆ /

5. ՍՏԵՂԾԵԼ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ

/ՋԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 0/

Լսեցին

**«ՄԱՐՏՈՒՆՈՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետի, 35-րդ հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի ներկայացրած «Մարտունու Մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածու Լիանա Սամվելի Դումանյանի թեկնածությանը՝ նշանակելով կազմակերպության տնօրեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10/

Լսեցին

**ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 28-րդ ենթակետով, 35-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության՝ 01.09.2005թ. N 1428-Ն որոշման, ինչպես նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 26.01.2007թ. N 29-Ն և 21.07.2010թ. N 754-Ն հրամանների պահանջները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2018թվականի

հաստիքացուցակները, աշխատողների թվաքանակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների (ԿՑՎՈՒՄ Է):

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11/

Լսեցին
**ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով.

1. Հաստատել Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնի դրույքաչափերը՝ համայձայն N 1 և N 2 հավելվածների:
2. Ուժը կորցրած ճանաչել Ճամբարակ համայնքի ավագանու 2017թ. նոյեմբերի 11-ի «Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 4-Ա որոշման N1 և N 2 հավելվածները:
3. Առաջարկել Ճամբարակ համայնքի ղեկավարին՝ Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9/

Ավագանու անդամներ

ԳԵՎՈՐԳ ԱԴԱՄՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԴՈՒՄԱՆՅԱՆ

ՄԱԿԻՉ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ__________________

Նիստն արձանագրեց՝ Արտակ Ստեփանյանը

______________________________________